այլազգիք կողոպտելով զամենայն ինչս մեր մինչ յետին թշուառութիւն հասուցին, որ խղճուկ ժողովուրդք Հայոց այժմոյս հազիւ լցուցանեն քաղցրս յորովայնի իւրեանց և քօղաւորեն մերկս անձանց և այլն, այլ առ այդպէս խորհօղաց ասեմ, որ այդ բան և այդ կացութիւն միայն է պատճառ շտապի ելանելոյ առ 'ի գործ և հնարելոյ ճար թշուառութեանց, զի զամենայն զոր ինչ դարման 'ի դեղատուէ հարկաւոր է ընդունիլ տկարաց, պարտ է մեզ ստանալ առաջ քան զմեռանիլ, քան զի յետ մահուան մերոյ ոչինչ դարման ոչ Օգնել կարէ տկարութեան մերոյ, 'ի այդ պատճառէ ոչ է արժան յապաղել ժամանակ մինչ կամք կենդանի։ Ես ոչ ուրանամ թշուառութիւնն ազգին իմոյ, զի այսօր եղկելի է յոյժ, այլ գոհանամ 'ի Տեառնէ, զի դեռ ևս ոչ այն քան թշուառ իբր հոգեվարք կամ մերձ 'ի մահ, դեռ ևս ունիմք յոյս առողջանալոյ և ստանալոյ կեանս երջանիկս, թէպէտ տեսանեմք մեք աղտն տկարութեան ազգին մերոյ զի մահեցուցիչ է, այլ ոչ պակասագոյն գտաւ պնդութիւն տարերաց յազգին Հայոց՝ այսինքն յոյս և հաւատ հաստատուն կալով մնաց ձիք ժամանակ տկարացեալ և այժմոյս, որ ծանեաք մեք դեղ բժշկութեան աղտին մերոյ, հարկաւոր է զի շտապի արբցուք բաժակ բժշկութեան և ընդունեսցուք ձէթն բալասանի 'ի վերայ վիրաց մերոց զի փարատես-